

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ Վայոց ձորի մարզում 2018 թվականին քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների մասին

2019-2021 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրագրերի հետ կապված քննարկումներ ենք անցկացրել և կատարել համապատասխան ճշտումներ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ:

Քաղաքաշինության բնագավառում զարգացման ծրագրերի կատարման հետ կապված աշխատանքներ ենք տարել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ ենք տարել ՀՀ պետական բյուջեով, վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործակցության գործում:

#### **I. ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2018 թվականին մարզում քաղաքաշինության բնագավառում կատարվել է՝ կառուցապատման և վերանորոգման աշխատանքներ - 1075.972 մլն. դրամ, այդ թվում՝**

#### **1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ**

##### **Ջերմուկ համայնք**

- Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում-122.441
- Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բակային ճանապարհների ասֆալտապատում, եզրաքարերի տեղադրում-48.900
- Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի 4 բնակելի շենքերի տանիքաձածկույթի փոխարինում-27.636
- Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի տարածքների բարեկարգում, քաղաքային տնտեսության սպասարկման կայանի կառուցում-18.140
- Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքաձածկույթի շինվերանորոգում-226.871
- Ջերմուկ համայնքի Կեչուտ թաղամասի խաղահրապարակի կազմակերպման աշխատանքներ-7.013
- Ջերմուկ համայնքի ձախափնյա և աջափնյա թաղամասերի բնակելի շենքերի շքամուտքերի վերանորոգում-40.000

**Ընդամենը – 491.001**

2. ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրատվությամբ – 464.898 մլն. դրամ, այդ թվում՝

**Վայք համայնք**

- Վայք քաղաքում բազմաբնակարան շենքի կառուցման շարունակություն-203.0
  - Վայք քաղաքում ՊՆ պահեստի կառուցում-153.645
  - Վայք քաղաքում գորամասի ավտոհավաքակայանի ինժ. գծերի կառուցում-108.253
- Ընդամենը – 464.899**

3. Համայնքների պատվիրատվությամբ-120.073 մլն. դրամ, այդ թվում՝

**Գլաձոր համայնք**

- Գլաձոր բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում – 12.672

**Արենի համայնք**

- Զիվա, Արենի և Ելփին բնակավայրերի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներ-10.637
- Արփի բնակավայրի մանկապարտեզի խոհանոցի և դասասենյակի հիմնանորոգում-3.568
- Աղավնաձոր բնակավայրի կոյուղու մասնակի կառուցում-2.424

**Եղեգնաձոր համայնք**

- Եղեգնաձոր բնակավայրի Երևանյան խճուղի 7 և Կամոյի 2 շենքերի բակի նորոգում-23.907

**Եղեգիս համայնք**

- Շատին բնակավայրի 1-ին փողոցի արտաքին լուսավորություն-1.392
- Քարազլուխ բնակավայրի ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ-4.381

**Մալիշկա համայնք**

- Մալիշկա բնակավայրի կենտրոնական փողոցի փողոցային լուսավորություն-4.147

**Ջառիթափ համայնք**

- Ջառիթափ բնակավայրում մեքենատրանսպորտային կայանատեղի կառուցում-11.009

-

Գոմք, Արտավան, Բարձրունի, Խնձորուտ, Մարտիրոս, Սերս,  
Զառիթափ  
և Նոր Ազնաբերդ բնակավայրերի խմելու ջրագծերի գլխամասային  
կառույցների, ջրագծերի ներքին և արտաքին ցանցերի կապիտալ  
վերանորոգման աշխատանքներ-45.936

**II. Համաշխարհային բանկի վարկային ՀՀ կառավարության  
համաֆինանսավորման և համայնքի ներդրման միջոցներով, Հայաստանի  
տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ- 99.215  
մլն. դրամ, այդ թվում՝**

**Արենի համայնք**

- Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿԶ-ի  
կառուցում-17.982

**Եղեգիս համայնք**

- Վարդահովտի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում-34.553

**Արենի համայնք**

- Ռինդի մանկապարտեզի վերակառուցում-46.680

**III. Համայնքային բյուջեով-230.357 մլն. դրամ, այդ թվում՝**

**1. Գլխավոր համայնք**

- Գլխավոր բնակավայրի ջրամատակարարման համակարգի  
վերակառուցում – 19.008
- Գետափ բնակավայրի ներհամայնքային ճանապարհի  
բարեկարգում և Գլխավոր բնակավայրի կամրջի վերակառուցում –  
11.740

**Ընդամենը – 30.748**

**2. Արենի համայնք**

- Արենի միջն. Դպրոցի ս/հ կառուցում – 2.4
- Ելփին բնակավայրի «Աղապեն» տարածքում կապտածների և  
ջրագծերի վերանորոգում – 3.42
- Արփի բնակավայրի մանկապարտեզի խոհանոցի և դասասենյակի  
հիմնանորոգում – 5.352
- Աղավնաձոր բնակավայրի կոյուղու մասնակի կառուցում – 3.635
- Չիվա բնակավայրի խմելու ջրի վերանորոգում – 3.697
- Արենի բնակավայրի «Ախտա» կոչվող արտաքին ջրագծի  
վերանորոգում – 6.880

**Ընդամենը – 25.384**

### **3. Եղեգիս համայնք**

- Հորս բնակավայրի արտաքին լուսավորություն – 3.7
- Շատին բնակավայրի արտաքին լուսավորության կառուցում – 2.088
- Արտաբույնք բնակավայրի արտաքին լուսավորության կառուցում – 3.4
- Քարաքլուխ բնակավայրի ոռոգման ցանցի վերանորոգում – 2.92

**Ընդամենը -12.108**

### **4. Եղեգնաձոր համայնք**

- Եղեգնաձոր քաղաքի Երևանյան խճուղի 7 և Կամոյի 2 շենքերի բակերի բարեկարգում-26.900

**Ընդամենը-26.900**

### **5. Զատիրթափ համայնք**

- Զատիրթափ բնակավայրի ջրամատակարարման համակարգի մասնակի և կապիտալ վերանորոգում – 49.360
- Զատիրթափ, Արտավան, Խնձորուտ, Մարտիրոս, Գոմք և Նոր Ազնաբերդ բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կապիտալ հիմնանորոգում – 68.904
- Զատիրթափ բնակավայրի շենքի հիմնանորոգում – 9.9

**Ընդամենը – 128.164**

### **6. Մալիշկա համայնք**

- Մալիշկայի կենտրոնականան փողոցի փողոցայինլուսավորություն- 7.053

**Ընդամենը-7.053**

## **IV. Մասնավոր ներդրումներով-775.06 մլն. դրամ, այդ թվում՝**

### **1. Գլաձոր համայնք**

- Գլաձոր բնակավայրի «Միլենա» գեղեցկության սրահի կառուցում – 2.8
- Գետափ բնակավայրի առանձնատան կառուցում – 7.5
- Վերնաշեն բնակավայրի պահեստի կառուցում – 0.7

**Ընդամենը – 11.0**

### **2. Ջերմուկ համայնք**

- Գնդեվազ բնակավայրի վարսահարդարման սրահի կառուցում – 2.8

- Ջերմուկ բնակավայրի ձախափնյակ թաղամասի բնակելի տան և ավտոտնակի կառուցում – 1.0
- Գնդեվազ բնակավայրի սննդի սպասարկման կետի կառուցում – 1.0
- Ջերմուկ բնակավայրի ձախափնյակ թաղամասի ավտոտնակի կառուցում-1.0

**Ընդամենը – 5.8**

### **3. Վայք համայնք**

- Վայք համայնքի «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» ֆոտովոլտային արևային կայանի կառուցում – 550.0
- Վայք բնակավայրում առևտրի սրահի կառուցում-17.5
- Վայք բնակավայրում Շահումյան փողոցի գազի լիցքավորման կետի կառուցում-12.0
- Վայք բնակավայրում ջրամիացման հանգույցի կառուցում-0.2
- Վայք բնակավայրում բնակարանի պատուհանի ձևավորում-0.5
- Վայք բնակավայրում բաց պատշգամբի կառուցում-1.0
- Վայք բնակավայրում տնտեսական և նկուղային մաս. և ավտոտնակի կառուցում-2.5
- Վայք բնակավայրում ավտոտնակի կառուցում-5.0
- Վայք բնակավայրում ավտոտնակի կառուցում-1.5

**Ընդամենը – 590.2**

### **4. Եղեգնաձոր համայնք**

- Եղեգնաձոր բնակավայրում ջերմոցի կառուցում-1.0
- Եղեգնաձոր բնակավայրի ավտոտնակի կառուցում մեկ հարկանի-2.0

**Ընդամենը – 3.0**

### **5. Արենի համայնք**

- Արենի բնակավայրում բնակելի տան օժանդակ շինության կառուցում-12.4
- Արենի բնակավայրի մեկ հարկանի առանձնատուն ձեռնահարկով-4.0
- Արենի բնակավայրի երկհարկանի առանձնատան կառուցում-10.0
- Արենի բնակավայրի մեկ հարկանի առանձնատան կառուցում-3.0
- Արենի բնակավայրի մեկ հարկանի առանձնատան կառուցում-4.0
- Արենի բնակավայրի երկհարկանի առանձնատան կառուցում-18.0
- Արենի բնակավայրի երկհարկանի առանձնատան կառուցում-12.5
- Աղավնաձոր բնակավայրի բնակելի տան կառուցում-12.0
- Արենի բնակավայրի բնակելի տան օժանդակ շինության կառուցում-5.6

- Արենի բնակավայրի բնակելի տան կառուցում-6.8
- Ելփին բնակավայրի բնակելի տան կառուցում-3.5
- Արենի բնակավայրի անասնագոմի կառուցում-1.56
- Արփի բնակավայրի հանգստյան գոտու և գոյություն ունեցող շենքի վերակառուցում-16.2
- Արփի բնակավայրի մեկ կարկանի բնակելի տան կառուցում-4.0

**Ընդամենը – 113.56**

#### **6. Եղեգիս համայնք**

- Շատին բնակավայրի տնտեսական (անասնագոմ) շինության կառուցում-12.0
- Շատին բնակավայրի անասնագոմի կառուցում-1.0
- Աղնջաձոր բնակավայրի առանձնատանը կից օժանդակ շինության կառուցում-1.0
- Սալի բնակավայրի առևտրի սրահի կառուցում-5.5
- Վարդահովիտ բնակավայրի կաթի մթերման կետի և վերամշակման կետի կառուցում-30.0
- Արտաբույնք բնակավայրի սղոցարանի վերակառուցում որպես ոչ ոգելից խմիչքների արտադր.-1.0

**Ընդամենը – 50.5**

#### **7. Զատիրթափ համայնք**

- Զատիրթափ բնակավայրի ավտոտեխսպասարկման կետի կառուցում-1.0

**Ընդամենը – 1.0**

**V. Միջազգային ֆինանսակ. ներդրումների գրասենյակի միջոցով- 28.86 մլն. դրամ՝**

#### **1. Ջերմուկ համայնք**

- Կարմրաշեն բնակավայրի արոտավայրերի ջրարբիացման համակ. կառուցում-28.86

**Ընդամենը – 28.86**

**VI. «Վեոն Արմենիա»-ի միջոցներով-29.5 մլն. դրամ, այդ թվում՝**

**1. Վայք համայնք**

- Վայք բնակավայրի Ջերմուկ խճ. 12 շարժական անտենայի տեղադրում DC-BK3 տիպի-12.0
- Վայք բնակավայրի Ջերմուկ խճ. 55-1 շարժական անտենայի տեղադրում DC-BK3 տիպի -12.0

**Ընդամենը – 24.0**

**2. Զառիթափ համայնքի**

- Զառիթափ բնակավայրի 12 մ բարձրությամբ հեռախոսակցակայան-5.5

**Ընդամենը – 5.5**

**VII. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցով- 4.3 մլն. դրամ`**

**1. Արենի համայնքի**

- Արենի բնակավայրի բնակ. տան մեջ գինու համտեսի սրահի վերակառուցում- 4.3

**Ընդամենը – 4.3**

**VIII. «Գնիշիկ միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ»-ի միջոցներով-4.2 մլն. դրամ`**

**1. Արենի համայնքի**

- Խաչիկ բնակավայրի պահեստային շենքի տանիքի հիմնանորոգում- 4.2

**Ընդամենը – 4.2**

**IX. «Թուֆեիկյան Հոսփոխարկի» ՍՊԸ-ի միջոցներով- 300.0 մլն. դրամ, այդ թվում`**

**1. Արենի համայնքի**

- Արենի բնակավայրում հյուրանոցային համալիրի կառուցում-300.0

**Ընդամենը – 300.0**

**X. «Վեոլա Ջուր» կազմակերպության միջոցներով- 38.18 մլն. դրամ`**

**1. Եղեգիս համայնքի**

- Շատին բնակավայրի «40 աղբյու» և «Ոստան» ջրաղբյուրների վարակազերծման համար քլորակայանի կառուցում-38.18

Ընդամենը – 38.18

XI. «Յուքոմ» ՍՊԸ-ի միջոցներով- 1.82 մլն. դրամ, այդ թվում՝

1. Եղեգիս համայնքի

- Աղնջաձոր համայնքի հենասյունների կառուցում-0.52  
Ընդամենը – 0.52

2. Զառիթափ համայնքի

- Զառիթափ բնակավայրի բջջային կայանի կառուցում 1.3  
Ընդամենը – 1.3

XII. ՀՀ ԿԱ «Գյուղատնտեսական զարգացման հիմնադրամ»-ի միջոցներով-  
34.0 մլն. դրամ՝

1. Զառիթափ համայնքի

- Զառիթափ բնակավայրի արտավայրերում ջրարբիացման  
համակարգի կառուցում-34.0  
Ընդամենը – 34.0

Ընդամենը I-XII գլխ.-2621.464 մլն. դրամ

XIII. «Լիդիան Արմենիա» ՓԲԸ –Ամուլ սարի ոսկու հանք-20802.342 մլն. դրամ

Ընդամենը մարզում՝ 23423.806 մլն. դրամ

### **Ճարտարապետության բնագավառ**

Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրմանը և խոչնդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ:

Քննարկվել և մեր համաձայնությունն ենք տվել << Հասարակական շենքեր և շինություններ >> ՀՀ շինարարական նորմերի նախագծերի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ստացած որոշման նախագծերին :

Աշխատանքներ է տարվել մարզում նոր բժշկական կենտրոն կառուցելու համար տարածքի ընտրության և նախագծման համար տեխնիկական պայմանների տրամադրման գործում:



Համայնքներից ստացել ենք գլխավոր հատակագծերի և առանձին հողամասերի նպատակային նշանակության փոփոխության մասին առաջարկություններ, որոնք ուղարկել ենք ՀՀ կառավարությանը առընթեր քաղաքաշինական պետական կոմիտե և ստացել դրական եզրակացություն՝

1. Արենի համայնքից- 1հատ
2. Եղեգնաձոր քաղաքից – 1 հատ
3. Ջերմուկ համայնքից -7 հատ
4. Գլաձոր համայնքից-1 հատ:

Հանձնարարականներ է ուղղարկվել համայնքներին՝

1. Նոր կառուցվող շինությունների տանիքների ու արտաքին այլ տարրերի նկատմամբ միասնական պահանջներ սահմանելու վերաբերյալ :
2. Տարիներ առաջ աճուրդային կարգով կառուցապատման նպատակով ձեռք բերված և մինչև օրս չկառուցապատված հողամասերի վերաբերյալ :
3. Ավտոգազալցման ճնշակայանների կառուցման նպատակով շինարարության թույլտվությունների տրամադրման դադարեցման մասին :

Բացատրական աշխատանքներ ենք տարել մարզում շինթույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և ընդունել ենք թվով 98 շինարարության և 5 քանդման թույլտվություններ համայնքներից:

Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Ուսումնասիրել և պատասխանել ենք համայնքներից ստացված բոլոր դիմում բողոքները և պարզաբանում ենք տվել քաղաքաշինության բնագավառին վերաբերվող խնդիրներին :

**Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ**

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով :

Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման և խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման, Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի խմելու ջրի բախշիչ ցանցի վերակառուցման, օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման աշխատանքները :

<< Վեոլա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր :

<< Վեոլա Ջուր>> ՓԲԸ-ի բնակիչ բաժանորդների թիվը 8870 է, իրավաբանական կազմակերպություններինը՝ 683:

<< Վեոլա Ջուր>> կազմակերպության միջոցներով կառուցվել է «40 աղբյուր» և «Ոստան» ջրաղբյուրների վարակազերծման համար քլորակայան, որը կնպաստի ազբաբնակչությանը մատակարարել նորմաներին համապատասխան որակյալ խմելու ջուր:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից :

Առաջարկվել է համայնքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ, որի ընթացքում 2018թ. ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել :

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը : Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը :

Գազաֆիկացման առկայությունը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը :

Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2018թ-ից 8114 է, որից 4291 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 3823 անհատական տներ:

Մարզի 8 համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
քաղաքաշինության վարչության պետ՝**

**Ա. Հովսեփյան**